ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Բաղալյան
_____
«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ տ.գ.թ., դոցենտ, Բաղալյան Մ.Է.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հանրային ծառայության իրավական հիմքերը ՀՀ-ում»

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.02.7 «Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Հանրային ծառայության իրավական հիմքերը ՀՀ-ում» դասընթացը մագիստրատուրայի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է առանցքային տեղ:

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կայացման խնդիրներով է մեծապես պայմանավորված հանրային ծառայության անցման կարգին ու պայմաններին առնչվող հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Այդ համատեքստում առանձնակի կարևորվում է հանրային ծառայության անցնելու հետ կապված հարցերի համալիր իրավական կարգավորումը, ինչպես նաև հանրային ծառայության կարգավորման օպերատիվությունը, հանրային ծառայության համակարգի արդյունավետությունը և թափանցիկությունը շարունակաբար բարելավելու, այն եվրոպական չափանիշներին մոտեցնելու անհրաժեշտությունը:

«Հանրային ծառայության իրավական հիմքերը ՀՀ-ում» դասընթացի շրջանակում ուսանողները կուսումնասիրեն հանրային ծառայությունը որպես վարչա-իրավական ինստիտուտ, հանրային ծառայության ձևավորման փուլերը և նախադրյալները ՀՀ-ում, Հանրային ծառայության էությունը և սկզբունքները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության իրավական հիմքերը, հանրային ծառայության պաշտոնները, դասային աստիճանները (կոչումները) և պաշտոնի անձնագրերը, հանրային ծառայության անցնելու կարգը և առանձնահատկությունները, հանրային ծառայողի իրավական վիճակը և սոցիալական երաշխիքները, հանրային ծառայողներին խրախուսելը, կարգապահական տույժի ենթարկելը և պաշտոնից ազատելը, հանրային ծառայողների վերապատրաստումը, ատեստավորումը, գնահատումը և կադրերի ռեզերվը, վարքագծի կանոնները, նվերներ ընդունելու արգելքը, շահերի բախումը, գույքի և եկամուտների հայտարարագրումը հանրային ծառայությունում:

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի հիմնական նպատակն է տրամադրել խորը և կիրառական գիտելիքներ հանրային ծառայության արդի հիմնահարցերի վերաբերյալ և զարգացնել անհրաժեշտ հմտությունները ու կարողությունները հանրային ծառայության համակարգում դրանք գործնականում կիրառելու առումով:

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

- ներկայացնել հանրային ծառայության, որպես սահմանադրահիրավական ինստիտուտի էությունը և պատմական զարգացման գործընթացը, բացահայտել հանրային ծառայության իրավական հիմքերը և դրանց դերն ու նշանակությունը պետական կառավարման համակարգում,

• ներկայացնել հանրային ծառայության սկզբունքները, նպատակները, խնդիրներն ու գործառույթները, հանրային ծառայության համակարգը, նրանում տեղ գտած պաշտոնների հետ կապված հիմնահարցերը,

• պարզաբանել հանրային ծառայության անցնելու իրավական հիմքերը և գործընթացները, սահմանել հանրային ծառայողի դերն ու նշանակությունը,

• բացահայտել վարքագծի կանոնները և կարգապահական իրավահարաբերությունները հանրային ծառայության համակարգում:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- հանրային ծառայության հասկացությունը
- հանրային ծառայության մոդելները,
- հանրային ծառայության նպատակները, խնդիրները, գործառույթները,
- հանրային ծառայության սկզբունքները

կարողանա՝

- ներկայացնել հանրային ծառայության տարբեր տեսակների գործառութային առանձնահատկությունները
- բացահայտել հանրային ծառայողների աշխատանքի կազմակերպման յուրահատկությունները
- բացահայտել հանրային ծառայողների իրավական կարգավիճակը
- նկարագրել խրախուսման և սոցիալական երաշխիքների հետ կապված խնդիրները,
-

ունակ լինի՝

- քննարկել հանրային ծառայության հայեցակարգային մոտեցումների ազդեցությունը պետական արդյունավետ կառավարման գործընթացներում,
- տիրապետել ու փոխանցել որոշակի ակադեմիական գիտելիքներ՝ հանրային ծառայության և նրա հետագա զարգացման արդի միտումների շուրջ:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (32 ակադեմիական ժամ)

աշխատատարությամբ: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		2 Կիս	2 Կ	3 Կ	4 Կ	5 Կ	6 Կ
1	2	3	4	5	6	7	8
Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**32**	**32**					
Լսարանային պարապմունքներ:							
Դասախոսություններ	16	16					
Լաբորատոր աշխատանքներ							
Սեմինարներ	**16**	**16**					
Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝							
քննություններին նախապատրաստում							
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**	**քննություն**					

2.3. Առարկայի ծավալը՝ 32 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**ընդամենը (ժամ)**	**դասախոսություն**	**գործնական պարապմունք**
Թեմա 1. Հանրային ծառայությունը որպես վարչա-իրավական ինստիտուտ	2	1	1
Թեմա 2. Հանրային ծառայության ձևավորման փուլերը և նախադրյալները ՀՀ-ում	3	2	1
Թեմա 3. Հանրային ծառայության էությունը. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները	3	1	2
Թեմա 4. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության իրավական հիմքերը	2	1	1

Թեմա 5. Հանրային ծառայության պաշտոնները, դասային աստիճանները (կոչումները) և պաշտոնի անձնագրերը	3	1	2
Թեմա 6. Հանրային ծառայության անցնելու կարգը և առանձնահատկությունները	4	2	2
Թեմա 7. Հանրային ծառայողը. նրա իրավական վիճակը և սոցիալական երաշխիքները	3	2	1
Թեմա 8. Հանրային ծառայողներին խրախուսելը, կարգապահական տույժի ենթարկելը և պաշտոնից ազատելը	4	2	2
Թեմա 9. Հանրային ծառայողների վերապատրաստումը, ատեստավորումը, գնահատումը և կադրերի ռեզերվը	4	2	2
Թեմա 10. Վարքագծի կանոնները, նվերներ ընդունելու արգելք, շահերի բախումը, գույքի և եկամուտների հայտարարագրումը հանրային ծառայությունում:	4	2	2
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԺԱՄ	32	16	16

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

Թեմա 1. Հանրային ծառայությունը որպես վարչա-իրավական ինստիտուտ

Հանրային ծառայությունը որպես պետության վարչա-իրավական ինստիտուտ, հանրային ծառայության հասկացությունը և իրավական բնույթը, հանրային ծառայության նպատակները:

Թեմա 2. Հանրային ծառայության ձևավորման փուլերը և նախադրյալները ՀՀ-ում

Հանրային ծառայության ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում, փուլերը, նախադրյալները:

Թեմա 3. Հանրային ծառայության էությունը. Հանրային ծառայության հիմնական սկզբունքները

Հանրային ծառայության համակարգի էությունն, հանրային ծառայության սկզբունքները, համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության բաղադրիչ:

Թեմա 4. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության իրավական հիմքերը

Հանրային ծառայության համակարգի իրավական հիմքերը, հանրային ծառայության սահմանադրական հիմքերը, «Հանրային ծառայության մասին» օրենքը՝ որպես հանրային ծառայության հիմնական օրենսդրական աղբյուր, «Հանրային ծառայության մասին» օրենքը՝ որպես քաղաքացիական ծառայության հիմնական օրենսդրական աղբյուր, հանրային ծառայության առանձին տեսակների իրավական հիմքերը:

Թեմա 5. Հանրային ծառայության պաշտոնները, դասային աստիճանները (կոչումները) և պաշտոնի անձնագրերը

Հանրային ծառայության տեսակները, պաշտոնները և դրանց իրավական բնույթը, հանրային ծառայության պաշտոնների դասակարգումը, հանրային ծառայության դասային աստիճանները (կոչումները), հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը և անձնագրերը:

Թեմա 6. Հանրային ծառայության անցնելու կարգը և առանձնահատկությունները

Հանրային ծառայության անցնելու իրավական հիմքերը և պայմանները, հանրային ծառայության անցնելու կարգն ու եղանակները, հանրային ծառայության պաշտոնի նշանակումը, հանրային ծառայության ստաժը:

Թեմա 7. Հանրային ծառայողը. նրա իրավական վիճակը և սոցիալական երաշխիքները

Հանրային ծառայողի իրավական վիճակը, հանրային ծառայողի հիմնական իրավունքները, հանրային ծառայողի հիմնական պարտականությունները, հանրային ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները, հանրային ծառայողի սոցիալական երաշխիքները:

Թեմա 8. Հանրային ծառայողներին խրախուսելը, կարգապահական տույժի ենթարկելը և պաշտոնից ազատելը

Հանրային ծառայողին խրախուսելը և խրախուսման հիմքերը, հանրային ծառայողի նկատմամբ խրախուսանք կիրառող մարմինները և պաշտոնատար անձինք, հանրային ծառայողին կարգապահական տույժի ենթարկելու կարգն ու հիմքերը, հանրային ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառող

մարմինները և պաշտոնատար անձինք, հանրային ծառայողին պաշտոնից ազատելը:

Թեմա 9. Հանրային ծառայողների վերապատրաստումը, ատեստավորումը, գնահատումը և կադրերի ռեզերվը

Հանրային ծառայողի վերապատրաստումը և դրա առանձնահատկությունները պետական ծառայության համակարգում, հանրային ծառայության կադրերի ռեզերվը:

Թեմա 10. Վարքագծի կանոնները, նվերներ ընդունելու արգելք, շահերի բախումը, գույքի և եկամուտների հայտարարագրումը հանրային ծառայությունում

Վարքագծի կանոնների իրավաբանական բովանդակությունը հանրային ծառայությունում, նվերներ ընդունելու արգելքը, շահերի բախումը հանրային ծառայությունում, գույքի, եկամուտների, շահերի և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրումը, հանրային ծառայության համակարգում գործող էթիկայի հանձնաժողովը, կոռուպցիայի հասկացությունը և առաջացման պատճառները, կոռուպցիայի կանխարգելման իրավական ուղիները:

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. **Եղյան Ռ.** «Քաղաքացիական (պետական) ծառայությունը ՀՀ-ում», Երևան, 2003
2. **Եզեկյան Ա.** «Հանրային ծառայության զարգացման առկա խնդիրները», Երևան, 2017
3. **Եզեկյան Ա., Հովհաննիսյան Գ., Հակոբյան Դ., Նազարյան Ն.** «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության համակարգ» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2017
4. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայությունը 2002-2012», Երևանի քաղաքացիական ծառայության խորհուրդ, Երևան, 2012

Լրացուցիչ՝

1. J. John Problems of the public management. Handbook-New York, 2014
2. Alikhan Baimenov- Panos Liverakos- Editors Public service evolution in the 15 Post-Soviet countries. Diversity and Tranformation. Palgrave Macmillan, Singapore Pte Ltd., 2022

<u>բ) Նորմատիվ իրավական ակտեր</u>

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. ՀՀ օրենք «Հանրային ծառայության մասին»
3. ՀՀ օրենք «Քաղաքացիական ծառայության մասին»
4. ՀՀ օրենք «Համայնքային ծառայության մասին»
5. ՀՀ օրենք «Դիվանագիտական ծառայության մասին»
6. ՀՀ օրենք «Դատական ծառայության մասին»
7. ՀՀ օրենք «Հարկային ծառայության մասին»
8. ՀՀ օրենք «Մաքսային ծառայության մասին»
9. ՀՀ օրենք «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին»
10. ՀՀ օրենք «Հատուկ քննչական ծառայության մասին»
11. ՀՀ օրենք «Դատախազության մասին»
12. ՀՀ օրենք «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին»
13. ՀՀ օրենք «Ոստիկանությունում ծառայության մասին»
14. ՀՀ օրենք «Հայաստանի փրկարար ծառայության մասին»
15. ՀՀ օրենք «Քրեակատարողական ծառայության մասին»
16. ՀՀ օրենք «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»
17. ՀՀ օրենք «Դատական դեպարտամենտում ծառայության մասին»
18. ՀՀ օրենք «Պրոբացիայի մասին»
19. ՀՀ օրենք «Էկոպարեկային ծառայության մասին»

գ)Ինտերնետային կայքեր

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար
Հարցաշար

1. Հանրային ծառայության հասկացությունը և իրավական բնույթը:
2. Հանրային ծառայության նպատակները:
3. Հանրային ծառայության սկզբունքները:
4. Հանրային ծառայության ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում:
5. Հանրային ծառայության համակարգի էությունն ու իրավական հիմքերը:
6. Հանրային ծառայության տեսակները, պաշտոնները և դրանց իրավական բնույթը:
7. Համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության բաղադրիչ:

8. Հանրային ծառայության սահմանադրական հիմքերը:
9. «Հանրային ծառայության մասին» օրենքը՝ որպես հանրային ծառայության հիմնական օրենսդրական աղբյուր:
10. «Հանրային ծառայության մասին» օրենքը՝ որպես քաղաքացիական ծառայության հիմնական օրենսդրական աղբյուր:
11. Հանրային ծառայության առանձին տեսակների իրավական հիմքերը:
12. Հանրային ծառայության պաշտոնների դասակարգումը:
13. Հանրային ծառայության դասային աստիճանները (կոչումները):
14. Հանրային ծառայության պաշտոնների անվանացանկը և անձնագրերը:
15. Հանրային ծառայության անցնելու իրավական հիմքերը և պայմանները:
16. Հանրային ծառայության անցնելու կարգն ու եղանակները:
17. Հանրային ծառայության պաշտոնի նշանակումը:
18. Հանրային ծառայության ստաժը:
19. Հանրային ծառայողի իրավական վիճակը:
20. Հանրային ծառայողի հիմնական իրավունքները:
21. Հանրային ծառայողի հիմնական պարտականությունները:
22. Հանրային ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները:
23. Հանրային ծառայողի սոցիալական երաշխիքները:
24. Հանրային ծառայողին խրախուսելը և խրախուսման հիմքերը:
25. Հանրային ծառայողի նկատմամբ խրախուսանք կիրառող մարմինները և պաշտոնատար անձինք:
26. Հանրային ծառայողին կարգապահական տույժի ենթարկելու կարգն ու հիմքերը:
27. Հանրային ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառող մարմինները և պաշտոնատար անձինք:
28. Հանրային ծառայողին պաշտոնից ազատելը:
29. Հանրային ծառայողի վերապատրաստումը և դրա առանձնահատկությունները պետական ծառայության համակարգում:
30. Հանրային ծառայության կադրերի ռեզերվը:
31. Վարքագծի կանոնների իրավաբանական բովանդակությունը հանրային ծառայությունում:
32. Նվերներ ընդունելու արգելքը:
33. Շահերի բախումը հանրային ծառայությունում:
34. Գույքի, եկամուտների, շահերի և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրումը:

35. Հանրային ծառայության համակարգում գործող էթիկայի հանձնաժողովը:
36. Կոռուպցիայի հասկացությունը և առաջացման պատճառները:
37. Կոռուպցիայի կանխարգելման իրավական ուղիները:

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: